



Ծրագրի անվանումը

Անասնաբուժական ծառայությունների տեխնիկական և ինստիտուցիոնալ
աջակցությունը Հայաստանում

**Ընդհանուր
տեղեկություններ**

Տարածաշրջանը. *Սյունիք (Հայաստան)*
Տևողությունը. *2013 թ. հունվարի 1-ից մինչև 2015 թ. նոյեմբերի 30-ը*
Բյուջեն. *1 417 520 շվեյցարական ֆրանկ*

Ծրագրի գործընկերները

- Իրականացնող գործընկերները. *ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) և Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ-ն*
- Ինստիտուցիոնալ գործընկերները. *Հայաստանի Հանրապետության Գյուղատնտեսության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման նախարարությունը, Սյունիքի մարզպետարանը*

Ծրագրի նպատակները

Ծրագրի ընդհանուր նպատակն է Սյունիքի մարզի հանրային ոլորտում անասնաբուժական ծառայությունների ամրապնդումը՝ նպաստելով սննդամթերքի անվտանգության համակարգի բարելավմանը և Հայաստանում գյուղատնտեսության կայուն զարգացմանը:

Նախապատմությունը

Հայաստանում գյուղատնտեսական արտադրանքի մոտ 35%-ը գոյանում է անասնապահության ոլորտում, որտեղ գերակշռում են խոշոր և մանր եղջերավոր անասունները և որը հիմնված է անասնաբուժության ավանդական համակարգի վրա. քիչ քանակությամբ անասուններ նախիրում և տարբեր տեսակի կենդանիների հետ սերտ կապվածություն: Մա կենդանիների հիվանդությունների վերահսկումը դարձնում է ծայրահեղ դժվար: Կենդանիների հիվանդությունների լավ կառավարումը շատ կարևոր է սննդամթերքի անվտանգության համար. շատ հիվանդություններ կարող են հեշտությամբ տարածվել և հասնել համաճարակային չափերի, որոնց վերահսկումը/կառավարումը պահանջում է տարբեր երկրների միջև համագործակցություն: Անընդհատ ծագող այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են բրյուցելոզը, տուբերկուլյոզը, սիբիրյախտը, կատաղությունը, ինչպես նաև կենդանիների անդրսահմանային հիվանդությունները, ինչպիսիք են խոզերի աֆրիկյան ժանտախտը կամ դաբաղը, լուրջ խնդիրներ են ստեղծում Հայաստանի տնտեսության համար: Շատ համաճարակային հիվանդություններ կարող են վտանգել անասնաբուժության զարգացումը և սպառնալ կենդանիների և մսի արտահանմանը: Միայն բրյուցելոզը կարող է Հայաստանի տնտեսության համար չափազանց ծախսատար լինել: Ռիզիկո կորուստները գնահատվում են տարեկան շուրջ 10 մլն ԱՄՆ դոլար, որոնք կապված են անկումների կամ վարակված կենդանիների սպանողի հետ: Անուղղակի կորուստները կազմում են տարեկան առնվազն 20 մլն ԱՄՆ դոլար, ներառյալ տնտեսական այլ կորուստները, ինչպիսիք են օրինակ կրճատված արտադրողականությունը և բաց թողնված առևտրային հնարավորությունները: Հանրային առողջապահության տեսանկյունից բրյուցելոզը և տուբերկուլյոզը գլխավորում են կենդանիների հիվանդությունների ցանկը, որոնք ազդում են նաև մարդու առողջության վրա:

Ծրագրի գործողությունները

Ծրագրի միջամտության իրականացումը իրականացնող երկու կազմակերպությունների՝ ՌԶԳ ՀԿ-ի և ՄԱԿ ՊԳԿ-ի, միջև բաժանվում է երկու մասի:

ՌԶԳ ՀԿ-ն պատասխանատու է համայնքների ներգրավման և ուժեղացման համար, անասնաբուժական ծառայությունների ամրապնդման և թիրախային համայնքների իրազեկվածության բարձրացման համար, պատվաստման փորձնական արշավի ընթացքում աջակցություն ցուցաբերելու համար: ՌԶԳ-ն տարածաշրջանում ունի մշտական ներկայություն և արդեն ներգրավված է անասնաբուժական համակարգի աջակցության գործում:

ՊԳԿ-ն որոշակի դերակատարում կունենա քաղաքական և գիտա-կան խնդիրների լուծման գործում, որը պահանջում է փորձագի-տական գիտելիքներ և մեծ փորձ: ՊԳԿ-ն դերակատարում կունենա նաև հիվանդությունների կանխարգելման, համաճարակաբանու-թյան, ավելի բարձր մակարդակ ունեցող վերապատրաստման դասընթացների տրամադրման, լաբորատոր փորձարկումների իրականացման հարցերում; կաջակցի կառավարությանը բյուջեյոգի վերահսկման երկարաժամկետ ռազմավարության մշակման գործում: Ծրագիրը համակողմանիորեն կփորձարկի անասնաբուժության զարգացման խնդիրները: Փորձն ամբողջու-թյամբ կամ իր առանձին բաղադրիչներով (անասնաբուժության տնտեսական զարգացումը, անասնաբուժական ծառայությունների միջոցով հիվանդությունների կանխարգելումը) կարող է որպես բարձր որակ ունեցող մոդել ծառայել: Այն բանից հետո, երբ պատվաստումային մոտեցման արդյունավետությունը հաստատվի ծրագրի կողմից, կառավարությունը կդիտարկի ծրագրի մասշտաբների ընդլայնումը ազգային մակարդակում և կմշակի համապատասխան ռազմավարություն:

Ծրագրի արդյունքները

Ծրագրի ազդեցությունը սոցիալական մակարդակում եկամուտների ավելացումն է (անասուններից ստացվող եկամուտների) և բյուջեյոգի վերացման միջոցով գյուղական բնակչության հանրային առողջապահության բարելավումը: Ծրագիրն ընդգրկում է Սյունիքի մարզի բոլոր 100 գյուղերը՝ թվով 49՝400 բնակչությամբ և 48՝000 խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով (որոնցից 24՝000-ը կովեր են) և 75՝000 մանր եղջերավոր անասունների գլխաքանակով:



Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

**Swiss Cooperation Office
South Caucasus**

Swiss Cooperation Office South Caucasus
Embassy of Switzerland

Melik-Adamyant Street 2/1, Yerevan, Armenia
Phone (+374 10) 52 40 88; (+374 10) 52 98 60
Fax: (+374 10) 52 98 61
E-mail: yerevan@sdc.am
Web-page: www.swisscoop.am